ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ
Զիզեթ Մուլինզ (Zizette Mullins), MMC
Քաղաքի Գործավար
Քաղաքի Գործավարի գրասենյակ
(818) 238-5851
zmullins@burbankca.gov

ԲԸՐԲԵՆՔԻ 2020 Թ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

ԲԸՐԲԵՆՔ, Կալիֆորնիա (Հուլիսի 7, 2020) – Բըրբենք քաղաքը հայտարարում է 2020 թ. Քաղաքային ընդհանուր ընտրություններին թեկնածությունների առաջադրման ժամկետի մեկնարկը: Քաղաքային ընդհանուր ընտրությունները տեղի կունենան 2020 թ. նոյեմբերի 3-ին: Ընտրությունները, որոնք կանցկացվեն 2020 թ. նոյեմբերի 3-ի Համընդհանուր ընտրություններին զուգընթաց, նպատակ ունեն լրացնել Քաղաքային խորհրդի երկու (2) տեղ՝ պաշտոնավարման լիարժեք, 2024 թ. դեկտեմբերի 16-ին լրացող քառամյա ժամկետով, և Քաղաքի Գանձապահի մեկ (1) տեղ, որի պաշտոնավարման ընթացիկ ժամկետը լրանում է 2022 թ. դեկտեմբերի 19-ին:

Քաղաքի ընտրովի պաշտոններին հավակնող թեկնածուներին ներկայացվող պայմանները հետևյալն են. ԱՄՆ քաղաքացի; առնվազն 18 տարեկան; Բըրբենք քաղաքի բնակիչ՝ թեկնածության առաջադրման թղթերը ներկայացնելուն նախորդող ժամանակահատվածում առնվազն 29 օր; և թեկնածության առաջադրման պահին Բըրբենք քաղաքում գրանցված ընտրող: Այս պայմաններին բավարարող անձինք կարող են դիմել Քաղաքի Գործավարի գրասենյակ՝ (818) 238-5851 համարով, սովորական աշխատանքային ժամերին, երկուշաբթի-ուրբաթ, ժամը 8:00-ից 17:00-ը: **Թեկնածության առաջադրման ժամկետը մեկնարկում է երկուշաբթի, 2020 թ. հուլիսի 13-ին, ժամը 8:00-ին, և ավարտվում ուրբաթ, 2020 թ. օգոստոսի 7-ին, ժամը 17:00-ին:**

Եթե ներկայիս պաշտոնավարող անձը կրկին չի առաջադրվում մինչև վերը նշված վերջնաժամկետի ավարտը, ապա վերջնաժամկետը երկարաձգվում է մինչև չորեքշաբթի, 2020 թ. օգոստոսի 12-ը, ժամը 17:00-ը՝ միայն տվյալ տեղի համար այլ թեկնածությունների առաջադրման նպատակով:

Հավելյալ տեղեկատվության համար խնդրում ենք դիմել Քաղաքի Գործավարի գրասենյակ՝
հետևյալ հասցեով. City Hall, 275 East Olive Ave., Burbank, CA 91502
818-238-5851, կամ cityclerks@burbankca.gov

Burbankvotes @Burbankclerk www.burbankca.gov